ԱԿԲԱ ԲԱՆԿԻ ԽՄԲԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ESG) ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. «ԱԿԲԱ բանկի խմբի բնապահպանական, սոցիալական, կառավարման (ESG) բացառությունների ցանկ» փաստաթղթի (այսուհետ նաև՝ Փաստաթուղթ) նպատակն է սահմանել ԱԿԲԱ բանկի խմբի (այսուհետ՝ Խումբ) Հիմնական և Դուստր ընկերությունների կողմից սեփական միջոցների և Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցների հաշվին ֆինանսավորման ոչ ենթակա գործունեությունները, Հիմնական և Դուստր ընկերությունների կողմից հաստատման ենթակա գործունեությունները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական անվտանգության պահանջները:

2. Փաստաթղթում օգտագործվող հասկացությունները՝ ԱԿԲԱ բանկի խումբ, Հիմնական ընկերություն, Դուստր ընկերություն, ունեն ԱԿԲԱ բանկի խմբի կառավարման քաղաքականությամբ սահմանված իմաստները:

3. Մինչ Խմբի անդամների համապատասխան ներքին իրավական ակտերում փոփոխությունների կատարումը՝ Հիմնական և Դուստր ընկերությունները պետք է առաջնորդվեն Փաստաթղթի կարգավորումներով:

4. Փաստաթուղթը ներառում է՝

ա) **Հավելված 1՝** Խմբի բնապահպանական, սոցիալական, կառավարման (ESG) բացառությունների ցանկը,

բ) **Հավելված 2՝** Խմբի կողմից հաստատման ենթակա գործունեությունների ցանկը,

գ) **Հավելված 3՝** Միջազգային ֆինանսական կազմակերպության բնապահպանական և սոցիալական անվտանգության բացառությունների ցանկը,

դ) **Հավելված 4՝** Միջազգային ֆինանսական կազմակերպության սոցիալական անվտանգության պահանջները:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ESG) ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Խմբի Հիմնական և Դուստր ընկերությունները չպետք է ֆինանսավորեն հետևյալ գործունեությունները.

1) ՀՀ օրենսդրությամբ և/կամ միջազգային պայմանագրերով արգելված ապրանքների արտադրությունը կամ վաճառքը, ինչպիսիք են վտանգավոր դեղորայքը, պեստիցիդները/հերբիցիդները[1] կամ քիմիական նյութերը, օզոնային շերտը քայքայող նյութերը[2] պոլիքլորինացված դիֆենիլ (PCBs) պարունակող նյութերը,[3] վայրի բնության տարրերն ու CITES կոնվենցիայով կարգավորվող կենդանիները, բույսերը[4] և միջազգային օրենքներով արգելված թափոնների տեղափոխումը, առևտուրը երկրի սահմաններից դուրս,[5]

2) Ցանկացած ոլորտի գործունեություն, ծառայություն, կամ սարքավորման ձեռքբերման ֆինանսավորում, որը ենթակա է Միավորված ազգերի կազմակերպության, Եվրոպական միության կամ Ֆրանսիայի կողմից սահմանված տնտեսական պատժամիջոցների՝ առանց գումարի բացարձակ կամ հարաբերական սահմանափակման,

3) Միջուկային վառելիքի արտադրության հետ կապված գործունեությունը (ուրանի հանքարդյունաբերությունը, միջուկային վառելիքի արտադրությունը, պահեստավորումը կամ տեղափոխությունը) և ռադիոակտիվ նյութերի արտադրությունը կամ առևտուրը: Սա չի վերաբերվում այն բժշկական, որակի վերահսկման (չափման) և այլ սարքավորումների ձեռքբերմանը, որոնց մեջ ՄՖԿ-ի համոզմամբ ռադիոակտիվ նյութերը աննշան են կամ բավարար չափով պաշտպանված,

4) Վիճակախաղերն ու խաղատները [6],[16],

5) Զենքի, զինամթերքի արտադրությունն ու առևտուրը: Սույն կետի իմաստով զենք և զինամթերք են համարվում իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու համար նախատեսված սարքերը և առարկաները,[16]

6) Չմշակված ասբեստային մանրաթելի արտադրությունն ու առևտուրը,[7]

7) Կենսաբազմազանության և մշակութային ժառանգության պաշտպանությանը վերաբերվող ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային պայմանագրերով արգելված գործունեությունը, մշակութային արժեքների ապօրինի առևտուր կամ գործունեություն, որը նպաստում է մշակութային արժեքների ապօրինի շրջանառությանը[8]

---

[1] Տեղեկատու փաստաթղթերն են՝ որոշ վտանգավոր քիմիկատների ներմուծմանն ու արտահանմանը վերաբերող ԵՄ (EEC) թիվ 2455/92 կանոնակարգի փոփոխված տարբերակը, ՄԱԿ-ի ապրանքների ցանկ, որոնց սպառումը և/կամ վաճառքը պետության կողմից արգելված է, օգտագործումից հանված է կամ խիստ սահմանափակված է, Ռոտերդամի կոնվենցիան միջազգային առևտրում որոշ վնասակար քիմիկատների և պեստիցիդների վերաբերյալ, Ստոքհոլմի կոնվենցիան կայուն օրգանական աղտոտիչների վերաբերյալ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից պեստիցիդների դասակարգումն ըստ վտանգի աստիճանի:

[2] Օզոնային շերտը քայքայող նյութերը (ODSs), դրանք քիմիական միացություններ են, որոնք ազդեցություն են ունենում ստրատոսֆերային օզոնային շերտի վրա՝ առաջացնելով «օզոնային անցքեր»: Մոնրեալի արձանագրությունում թվարկված են օզոնային շերտը քայքայող նյութերը, նրանց նվազեցման նպատակային սահմաններն ու ժամկետները:

[3] Պոլիքլորինացված դիֆենիլը (PCBs) հանդիսանում է բարձր տոքսիկայնություն ունեցող քիմիկատների խումբ: Պոլիքլորինացված դիֆենիլը հաճախ օգտագործվել է 1950-1985 թվականներին արտադրված յուղով լցիցավորվող էլեկտրական տրանսֆորմատորներում, էլեկտրական կոնդենսատորներում և բաշխիչ սարքավորումներում:

[4] CITES: Ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բույսերի միջազգային առևտրի մասին կոնվենցիա: CITES կոնվենցիայով պաշտպանվող տեսակների ցանկն առկա է www.cites.org/eng/app/index.shtml կայքում:

[5] Տեղեկատու փաստաթղթերն են՝ թափոնների տեղափոխման մասին ԵՀ (EC) թիվ 1013/2006, 14 հունիսի 2006 կանոնակարգ, ՏՀԶԿ Խորհրդի թիվ C(2001)107 որոշում, 22 մարտի 1989 թվականի վտանգավոր թափոնների երկրից դուրս տեղափոխման և ոչնչացման վերահսկման Բազելի համաձայնագիրը:

[6] Սա չի վերաբերվում տվյալ գործունեությունների այն հովանավորներին, որոնց մասնակցությունը նման գործողություններում զգալի չէ: Ցանկացած ուղղակի ֆինանսավորում, որոնք ներառում են դրանք (օրինակ՝ խաղատուն ներառող հյուրանոց): Այն չի վերաբերում քաղաքաշինական զարգացման ծրագրերին, որոնք հետագայում կարող են ներառել նման նախագծեր:

[7] Սա չի վերաբերվում մինչև 20% ասբեստ պարունակող մշակված ասբեստ-ցեմենտային թերթերի օգտագործումը և արտադրությունը:

[8] Համապատասխան միջազգային համաձայնագրերն են մասնավորապես՝ Բոնների համաձայնագիրը վայրի կենդանիների միգրացիոն տեսակների պահպանման մասին, Ռամսարի համաձայնագիրը միջազգային նշանակության խոնավ և ճահճացած հողերի, մասնավորապես ջրլողների բնակության միջավայրի մասին, Բեռնի համաձայանագիրը Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին, Համաշխարհային ժառանգության մասին համաձայնագիրը, Կենսաբանական բազմազանության մասին համաձայնագիրը, Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և սեփականության իրավունքի փոխանցումն արգելելու և կանխելու միջոցների մասին կոնվենցիա (1970թ.)

8) Ծառահատում առևտրային նպատակներով արևադարձային խոնավ անտառներում,

9) Փայտի կամ անտառային ապրանքների արտադրություն կամ առևտուր, բացառությամբ անտառային տնտեսության ոլորտում կայուն կերպով օգտագործվող և կառավարվող անտառներից,

10) Առանց համապատասխան լիցենզիայի առկայության՝ ապրանքների առևտուրը, որոնց ներմուծման և արտահանման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվում է լիցենզիա,

11) Ծովային և առափնյա ձկնորսությունը, ինչպիսիք են օրինակ 2.5 կմ երկարությունը գերազանցող դրիֆտային ցանցերով ձկնորսությունը, և մանր ցանցերով ձկնորսություն, որը վնասակար է մեծ թվով խոցելի և պահպանվող կենդանատեսակների համար և ջրային բուսական և կենդանական տեսակների համար,

12) Նավթի կամ այլ վտանգավոր նյութերի փոխադրումը այն տանկերներով, որոնք չեն համապատասխանում Ծովագնացության միջազգային կազմակերպության (IMO) պահանջներին,[9]

13) Վնասակար կամ չարաշահող բնույթի հարկադիր աշխատանք/երեխաների աշխատուժ, մարդկանց թրաֆիքինգ պարունակող գործունեությունները,[10]

14) Պոռնոգրաֆիան և/կամ մարմնավաճառությունը,

15) Ռասիստական և/կամ հակաժողովրդավարական լրատվամիջոցները:

16) Հանածո վառելիքի հետ կապված նախագծերը.

ա. նավթի կամ ածուխի ուսումնասիրություն, արդյունահանում, վերամշակում կամ բաշխում,

բ. հանածո գազի ինքնուրույն հետախուզում և (կամ) արդյունահանում,

գ. տրանսպորտի և/կամ հարակից ենթակառուցվածքների կառուցում/վերակառուցում, որոնք հիմնականում[11] օգտագործվում են էլեկտրաէներգիայի արտադրության համար՝ ածուխի տեղափոխման նպատակով,

դ. հանածո նավթի խողովակաշարերի կառուցում և/կամ վերակառուցում,

ե. նավթավերամշակման գործարանի կառուցում և/կամ գոյություն ունեցող գործարանի վերակառուցում,

զ. ածուխի նոր էլեկտրակայանի կառուցում և/կամ գոյություն ունեցող ածուխի էլեկտրակայանների վերակառուցում,

է. ցանկացած էլեկտրակայանի կառուցում կամ գոյություն ունեցող էլեկտրակայանների վերակառուցում, որոնք աշխատում են միայն բարձր ջերմաստիճանի վառելիքով (մազութ) կամ միայն դիզելային վառելիքով, որոնք էներգիա են արտադրում հանրային ցանցերի համար և հանգեցնում են CO2-ի բացարձակ արտանետումների[12] ավելացմանը,

---

[9] Դրանք այն տանկերներն են, որոնք չունեն MARPOL SOLAS բոլոր անհրաժեշտ վկայականները (ներառյալ մասնավորապես, համապատասխանությունը Միջազգային անվտանգության կառավարման կոդին (ISM Code); Եվրամիության «սև ցուցակում» նշված կամ նավահանգստում՝ պետության կողմից նավերի վերահսկման մասին փոխըմբռնման փարիզյան հուշագրով (Paris MOU) արգելված տանկերները, ինչպես նաև MARPOL-ի թիվ 13G դրույթին համաձայն շահագործումից դուրս բերման ենթակա տանկերները: 25 տարուց ավել շահագործվող մեկ իրան ունեցող տանկերների ոգտագործումն արգելված է:

[10] «Հարկադիր աշխատանք» նշանակում է՝ ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը կատարվում է ոչ թե անհատի սեփական կամքով, այլ ուժի կամ պատժի սպառնալիքի կիրառման ազդեցության տակ, ինչպես սահմանված է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաներում: «Վնասակար մանկական աշխատանք» նշանակում է տնտեսական առումով չարաշահող կամ վնասակար աշխատանք, որը կարող է խոչընդոտել երեխայի կրթությանը, վնասել առողջությանը կամ ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը: Աշխատողները պետք է լինեն առնվազն 14 տարեկան, ինչպես սահմանված է ԱՄԿ-ի՝ Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին հռչակագրում, եթե տեղական օրենքները չեն պահանջում աշխատանքի ընդունման կամ աշխատանքի համար նվազագույն տարիք: Նման հանգամանքներում պետք է կիրառվի տարիքային ամենաբարձր պահանջը: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005); Հրահանգ 2011/36/ԵՄ

[11] «Հիմնականում» նշանակում է ենթակառուցվածքի 50% և ավելի մշակման տոննա,

[12] Այն դեպքերում, երբ էներգաարդյունավետության միջոցառումները չեն փոխհատուցում թողունակության կամ ծանրաբեռնավածության ավելացման հետևանքները,

[13] Սա չի տարածվում այն դեպքերի վրա, որի ժամանակ ածուխը օգտագործվում է քիմիական ռեակցիաներ սկսելու համար (օրինակ՝ մետալուրգիական ածուխը, որը խառնվում է երկաթի հանքաքարի հետ՝ երկաթ և պողպատ արտադրելու համար) կամ որպես այլ նյութի հետ խառնված բաղադրիչ՝ հաշվի առնելով պիտանի և առևտրային առումով ընդունելի այլընտրանքների բացակայությունը,

[14] Ֆրանսիական քաղաքացիական օրենսգրքի V. AR. 16-ից 16-14 հոդվածներ (հիմնականում սահմանված 1994թ. հուլիսի 29-ի թիվ 94-653 օրենքում՝ մարդու մարմնի նկատմամբ հարգանքի մասին և 2004թ. օգոստոսի 6-ի թիվ 2004-800 օրենքում՝ կենսաէթիկայի մասին): Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա՝ կապված կենսաբանության և բժշկության կիրառման հետ. Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա (Օվիեդո, 04/04/1997); Մարդու օրգանների առևտրի դեմ Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Սան ժաք դե Կոմպոստելա, 25/03/2015):

[15] Կենսաբանության և բժշկության կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա. Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա» (Օվիեդո, 04/04/1997); «Մարդու օրգանների առևտրի դեմ Եվրոպայի խորհրդի կոնվենցիա» (Սանտյագո դե Կոմպոստելա, 25/03/2015)

[16] Եթե այս գործունեությունները կազմում են ֆինանսավորվող կողմի շրջանառության 10%-ից ավելին կամ, եթե հաճախորդը ֆինանսական միջնորդ է, նրա պորտֆելի մնացորդի 10%-ից ավելին:

ը. ցանկացած ձեռնարկատիրական գործունեություն, որը նախատեսում է ընդլայնել ածուխի օգտագործումը էլեկտրաէներգիայի և/կամ ջերմության արտադրության համար[13]:

17) Ալկոհոլային խմիչքների արտադրություն ու առևտուր (բացառությամբ գարեջուր և գինի)[16],

18) Ծխախոտի արտադրություն ու առևտուր[16],

19) Անօրինական գործունեություններ՝ կապված մարդու օրգանների, հյուսվածքների հետ, կամ գենետիկ ինժեներիայի գործունեություններ, որոնք արգելված են Ֆրանսիայի ազգային կենսաբարոյական չափանիշներով[14], և համապատասխան եվրոպական կամ միջազգային չափանիշներով[15],

20) Գենետիկորեն ձևափոխված սերմերի հետազոտություն, գնում, խթանում կամ բազմացում[17],

21) Ադամանդի հանքերի շահագործում և ադամանդների վաճառք այն երկրներում, որոնք չեն միացել Քիմբերլիի գործընթացին:

22) Կենսաբազմազանություն.

ա) Ցանկացած ֆինանսավորում Զրոյական վերացման դաշինքի (AZE) տարածքներում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում ներառված բնական և խառը վայրերում և օրենքով պահպանվող տարածքներում (IUCN կատեգորիաներ) [18] և,

բ) Ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բացասական և անշրջելի մնացորդային ազդեցության կրիտիկական բնակավայրի վրա [19],

գ) Ցանկացած անտառային կամ գյուղատնտեսական նախագիծ լայն ծածկույթով (>100 հա), որը չի կիրառում զրոյական անտառահատման մեթոդաբանություն[20]:

23) Նախագծեր, որոնց նպատակը և/կամ մոտեցումը անհամատեղելի են մարդու իրավունքների հետ, իսկ մասնավոր հատվածի ֆինանսավորման դեպքում՝ նախագծեր, որոնց հիմքում ընկած հիմնավորումները հստակորեն հակասում են Միավորված ազգերի կազմակերպության՝ Բիզնեսի և մարդու իրավունքների ուղենիշային սկզբունքներին:

24) Նախագծեր, որտեղ հայտնի է, որ առաջարկվող նախագծի ազդեցության տարածքում իրականացվել է հարկադիր տեղահանում՝ Միավորված ազգերի կազմակերպության սահմանման իմաստով, և որի տեղահանումը պատճառահետևանքային կապ ունի այդ նախագծի նպատակի հետ, և որը նյութապես անհնար է փոխհատուցել:[21]

Այն դեպքում, երբ կոնկրետ ՄՖԿ-ի պահանջով առկա են այլ արգելված գործունեություններ, ապա Բանկն առաջնորդվում է տվյալ ՄՖԿ-ի պահանջներին համապատասխան:

---

[17] «Ներառական զարգացման և գլոբալ անհավասարությունների դեմ պայքարի մասին» 2021թ. օգոստոսի 4-ի թիվ 2021-1031 ծրագրային օրենքով արգելվում է ՖԶԳ-ի կողմից գենետիկորեն ձևափոխված սերմերի գնման, խթանման կամ բազմացման հետ կապված գործունեության ֆինանսավորումը (LPDSLI - Գլոբալ գործընկերության շրջանակ, Մաս II - B - b / - 3 - պարբերություն 6): ՖԶԳ-ն այս ցանկին ավելացնում է նաև հետազոտական գործունեությունը (Տարածքային և էկոլոգիական անցման ռազմավարություն 2020-2024)

[18] Եթե ֆինանսավորվող գործունեության և դրանց հետ կապված օբյեկտների ազդեցության տարածքը չի ներխուժում այն գոտիներ, որոնք փաստացի համապատասխանում են որպես AZE տարածք նշանակվելու չափանիշներին - https://zeroextinction.org/site-identification/aze-site-criteria/, Եթե ֆինանսավորման նպատակը չէ այս տարածքների պահպանությունը կամ վերականգնումը, Եթե ֆինանսավորման նպատակը չէ այս տարածքների պահպանությունը կամ վերականգնումը, կամ չի համապատասխանում վերջիններիս կառավարման և տարածական պլանավորման պայմաններին, ինչպիսիք են ֆինանսավորվող գործունեությանն առնչվող միջազգային ստանդարտներով ծրագրերում ձևակերպվածները - Պահպանվող տարածքների համաշխարհային տվյալների բազայի I-VI կատեգորիաներ | IUCN:

[19] Անշրջելի ազդեցություն՝ կենսաբազմազանության կամ էկոլոգիական ֆունկցիաների կամ բնութագրերի մշտական փոխակերպում կամ դեգրադացիա, որոնք հիմք են հանդիսացել կրիտիկական կենսամիջավայրի նշանակման համար: Մնացորդային ազդեցություն՝ կենսաբազմազանության արժեքի վրա ծրագրի չափելի ազդեցություն՝ խուսափման և մեղմացման միջոցառումների իրականացումից հետո, բայց մինչև վերականգնման և փոխհատուցման միջոցառումների իրականացումը: Կրիտիկական կենսամիջավայր՝ Համաշխարհային բանկի Բնապահպանական և սոցիալական ստանդարտ 6-ի - 2018 կամ IFC-GN PS6 2019-ի իմաստով: Եթե նշված ծրագիրը նպատակակետ երկրի համար չունի գերակա հանրային շահ, որի դեպքում շեղում կարող է ներկայացվել Խմբի ղեկավարությանը՝ որոշում կայացնելու համար:

[20] Մեթոդաբանություն, որը ներառում է (i) HCS մոտեցմանը համարժեք հենանիշային գործիք, որը թույլ է տալիս անտառների դասակարգում, (ii) երաշխիք, որ ծրագրի շրջանակներում ածխածնի բարձր պաշարներով ոչ մի անտառ չի փոխակերպվի և (iii) անտառածածկի մոնիթորինգ (դաշտային կամ արբանյակային մոնիթորինգ):

[21]ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի 1993/41 բանաձև՝ «Հարկադիր տեղահանում»: «Հարկադիր տեղահանում» տերմինը [...] սահմանվում է որպես մարդկանց, ընտանիքների և/կամ համայնքների՝ իրենց կամքին հակառակ մշտական կամ ժամանակավոր հեռացում այն տներից և/կամ հողերից, որոնք նրանք զբաղեցնում են՝ առանց իրավական կամ այլ պաշտպանության համապատասխան ձևերի տրամադրման և դրանց հասանելիության (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 7): Ծրագրի հովանավորի կողմից հարկադիր տեղահանման ենթարկված բնակչությանը նույնականացնելու մերժման կամ անկարողության պատճառով: Չեն բացառվելու այն ծրագրերը, որոնց դեպքում հնարավոր է ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

ԱԿԲԱ ԽՄԲԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

1) Բնակչության հարկադիր վերաբնակեցում ներառող գործունեություն,

2) ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային կոնվենցիաներով հսկողության տակ գտնվող բնապահպանական արժեք ներկայացնող կուսական անտառների, գիտական հետաքրքրություն ներկայացնող օբյեկտների, հազվագյուտ/ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակների, տնտեսապես կարևոր ձկնորսական տարածքների մոտ (կամ հոսանքով դեպի վեր) իրականացվող գործունեություն,

3) Բնիկ ժողովուրդների և/կամ խոցելի խմբերի կողմից զբաղեցված այն տարածքների մոտ (կամ հոսանքով դեպի վեր) իրականացվող գործունեությունը, որոնք օգտագործվում են ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով, ինչպիսիք են կենդանիներին արածեցնելը, որսորդությունը կամ ձկնորսությունը,

4) Այն գործունեությունները, որոնք կարող են ունենալ բացասական ազդեցություն մշակութային կամ հնագիտական նշանակության օբյեկտների վրա,

5) Միջուկային վառելիքի արտադրության հետ կապված գործունեությունը (ուրանի հանքարդյունաբերությունը, միջուկային վառելիքի արտադրությունը, պահեստավորումը կամ տեղափոխությունը) և ռադիոակտիվ նյութերի արտադրությունը կամ առևտուրը: Սա չի վերաբերվում այն բժշկական, որակի վերահսկման (չափման) և այլ սարքավորումների ձեռքբերմանը, որոնց մեջ ռադիոակտիվ նյութերը աննշան են կամ բավարար չափով պաշտպանված,

6) Էներգիայի արտադրություն միջուկային վառելիքի օգտագործմամբ (բացառությամբ էլեկտրա-էներգիայի ներմուծում/արտահանում),

7) Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների արձակումը բնական միջավայր,

8) Փոքր ՀԷԿ-երի կառուցում:

Հավելված 3

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄՖԿ-ի ռեսուրսների հաշվին Խմբի Հիմնական և Դուստր ընկերությունների կողմից չի կարող ֆինանսավորվել.

1) այնպիսի գործունեություն և ենթավարկ, որը կարող է ունենալ էական բացասական բնապահպանական ազդեցություն,

2) այնպիսի Գործունեություն կամ ենթավարկ, որը կարող է հանգեցնել հողի ձեռքբերման՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման միջոցով, կամ հողի և բնական ռեսուրսների սահմանափակ օգտագործման և 200 կամ ավելի մարդկանց ֆիզիկական կամ տնտեսական տեղափոխման կամ տեղահանման,

3) այնպիսի ծրագրեր, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ տեղաբնակների վրա,

4) այնպիսի հաճախորդին, ով որպես ապահովման միջոց կառաջարկի ոչ օրինական ձևով ձեռք բերված կամ երրորդ անձանց կողմից օգտագործվող գույք, որն էլ կարող է հանգեցնել տեղահանման կամ ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ բնիկների վրա:

Հավելված 4

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Եթե Խմբի հիմնական և Դուստր ընկերությունները ֆինանսավորում են ՄՖԿ-ի միջոցների հաշվին, հաճախորդները պետք է միջոցներ ձեռնարկեն համապատասխանելու սոցիալական ապահովության պահանջներին, որոնք ընդգրկում են հետևյալ հիմնական աշխատանքային ստանդարտները.[1]

1) գործունեությունն իրականացնում է օրենքով սահմանված կարգով՝ հավասար հնարավորություններ, աշխատանքի ընդունման ժամանակ արդար վերաբերմունք և խտրականության բացակայություն, աշխատակիցների աշխատանքային պայմաններ և ժամանակ (ներառյալ՝ կանանց աշխատանքի ընդունման նկատմամբ խտրականության կանխարգելում, կանանց և տղամարդկանց վարձատրության հավասար մոտեցումներ),

2) չի սահմանափակում իր աշխատողների՝ օրենքով սահմանված իրավունքներն արտահայտելու իրենց բողոքը և պաշտպանելու աշխատանքային պայմանների և ժամանակի հետ կապված իրենց իրավունքները,

3) համագործակցում է ապրանքներ և ծառայություններ մատուցող այնպիսի ընկերությունների հետ, որոնք.

ա. չեն օգտագործում երեխաների աշխատանքը[2] և հարկադիր աշխատանքը[3],

բ. ունեն համապատասխան կառավարման համակարգ, որը թույլ է տալիս պահպանել 1-ին և 2-րդ կետերով սահմանված ստանդարտները,

գ. աշխատակիցների հետ կնքում են այնպիսի աշխատանքային պայմանագրեր, որոնք պարունակում են «ա» և «բ» ենթակետերին վերաբերող դրույթներ:

---

[1] Հիմնական աշխատանքային ստանդարտներն իրենցից ներկայացնում են բոլոր տեսակի հարկադիր աշխատանքի, երեխաների աշխատանքի, աշխատանքի ընդունման խտրականության բացառումը, ինչպես նաև խմբային քննարկումների կազմակերպման իրավունքի ազատության ապահովումը համաձայն Աշխատանքի Միջազգային կազմակերպության կոնվենցիայի:

[2] Երեխաների աշխատանքը օրենքով սահմանված նվազագույն տարիքից ցածր տարիքի երեխաների աշխատուժն է, որը հակասում է Աշխատանքի Միջազգային կազմակերպության կոնվենցիային՝ No. 138 "Նվազագույն տարիքի կոնվենցիա" (www.ioo.org):

[3] Հարկադիր աշխատանքը ոչ կամավոր հիմունքներով, հարկադրաբար կատարվող աշխատանքն է կամ մատուցվող ծառայությունը: